ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(33), 28 փետրվարի, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պատվիրակությունը փետրվարի 19-ին հյուրընկալվել էր ՀՀ ազգային անվտանգության ծառայություն. նպատակը Կրթահամալիրի և ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի միջև համագործակցության հուշագրի կնքումն էր:

Հուշագիրն ստորագրեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը և ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի պետ, գեներալ-մայոր Հովհաննես Կարումյանը:

ՀՀ իրավապահ մարմինների ուսումնական հաստատությունների միջև կնքված հուշագրի նպատակն է՝ սահմանել համագործակցության ուղղությունները, կանոնակարգել նախատեսվող համատեղ միջոցառումները:

Ըստ հուշագրի՝ կողմերի միջև համագործակցությունը կծավալվի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության, վերլուծության և դրանց վերաբերյալ գիտականորեն հիմնավորված խորհրդատվական եզրակացությունների տրամադրման, գիտական հետազոտությունների թեմատիկայի համատեղ մշակման և իրականացման, մասնագետների փոխադարձ ներգրավման և մի շարք այլ ուղղություններով: Նախատեսվող փոխգործակցության առաջնահերթություններ են համարվելու Կրթահամալիրի և Գիտաուսումնական կենտրոնի կրթական և գիտագործնական հետազոտական աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև պահանջվող տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ունեցող աշխատակիցներ պատրաստելու ուղղությամբ առկա փորձի փոխանակումը:

Ուսումնական հաստատությունների ղեկավարները, ընդգծելով համագործակցության կարևորությունը, երկուստեք նշեցին, որ համագործակցությունը լավ խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների համար որակյալ կադրերի պատրաստման գործում:

Հուշագրի ստորագրումից հետո կողմերը շնորհավորեցին միմյանց՝ համոզմունքով, որ մեծ ճանապարհ ունեն միասին անցնելու:

ԿԱՅԱՑԱՎ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ

Սույն թվականի փետրվարի 11-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2021 թվականի 2-րդ նիստը: Օրակարգի հարցի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց հաստատել «Ոստիկանական գործ» մասնագիտության «պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման և դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստման ընթացքում ստուգարքների և դիֆերենցված ստուգարքների անցկացման կարգը, քննարկեց անհարգելի բացակայությունների (այդ թվում՝ պրակտիկայից և ստաժավորումից) հիմքով սովորողին Կրթահամալիրից ազատելու միջնորդությամբ ՀՀ ոստիկանության պետին դիմելու հարցը, վերանայեց ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակ ստացող սովորողներին 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակում կրթաթոշակի տրամադրումը, գիտխորհրդին ներկայացվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիր-ժամանակացույցով նախատեսված՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ստորաբաժանումների գործողությունների կատարման վերաբերյալ ամբողջական հաշվետվությունը:

Քննարկվեց ակադեմիայի նախկին 2 սովորողների վերականգնման հարցը:

ՇԱԽ ԵՎ ՄԱՏ. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ՀԱՂԹՈՂ Է

Փետրվարի 17-ից 19-ը «Դինամո» մարզական-հասարակական կազմակերպությունում անցկացվեց ոստիկանության արագ շախմատի առաջնությունը, որին մասնակցում էին ոստիկանության 16 ստորաբաժանումների և Արցախի ոստիկանության հավաքական թիմերը:

Կրթահամալիրի հավաքական թիմը մրցաշարին մասնակցեց հետևյալ կազմով՝ քոլեջի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ազատ Բաբախանյանը, քոլեջի հասարակական առարկաների և հոգեբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Արթուր Սարգսյանը, ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Հայկ Կուծանյանը: Թիմի ներկայացուցիչը ՄՖՊ ավագ դասախոս, ոստիկանության գնդապետ Ալբիկ Մինասյանն էր:

Կրթահամալիրի թիմը, կազմակերպված և հաջող խաղի շնորհիվ հավաքելով 14 միավոր, թիմային պայքարում հաղթող ճանաչվեց: Երկրորդ և երրորդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին ոստիկանության Երևան քաղաքի և Արարատի մարզային վարչությունների հավաքական թիմերը: Անհատական պայքարում լավագույնը ճանաչվեց ոստիկանության Երևան քաղաքի վարչության ծառայող Արտաշես Հովհաննիսյանը, 2-րդ տեղում՝ Հայկ Կուծանյանը՝ ոստիկանության կրթահամալիրից, երրորդ տեղում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ծառայող Արմենակ Գևորգյանը: Լավագույն խաղ ցուցադրելու համար Հայկ Փարսադանյանի անվան մրցանակին արժանացավ Արցախի ոստիկանության թիմից Մանանա Օատրյանը: Առաջնության հաղթողներն ու մրցանակակիրները պարգևատրվեցին դիպլոմներով, մեդալներով, հուշանվերներով ու դրամական պարգևներով: Մրցանակները հանձնեցին Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, սփյուռքի հանձնաժողովի նախագահ Մխիթար Հայրապետյանն ու ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնի պետ Արմեն Մկրտչյանը:

ԱՍՈՒՅԹԻ ՄՐՑՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻՆ

Վերջերս ՀՀ ոստիկանության կրթահամալիրի առաջին կուրսեցիների շրջանում կազմակերպվեց ասույթի մրցույթ՝ նվիրված Մայրենի լեզվի պաշտպանության միջազգային օրվան: Միջոցառման նպատակն էր ներկայացնել մայրենի լեզվի դերն ու նշանակությունն ազգապահպան գործում, երիտասարդների մեջ դաստիարակել հայրենապաշտություն, ազգասիրություն, զարգացնել ոսկեդենիկ հայերենով հաղորդակցվելու, մայրենի լեզվի գեղեցկությունն ու սահունությունը պահպանելու ձգտում, ներշնչել օտար լեզուներ սովորելու, բայց մայրենին խնամքով պահելու և չաղավաղելու գաղափար:

Ստորև ներկայացնում ենք մրցույթում հաղթած սովորողների ասույթները:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ Է ՀԱՅՐԵՆԻՔԸ. ՈՒՐԱՆԱՆՔ ԼԵԶՈՒՆ՝ ԿԿՈՐՑՆԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԸ:

Գևորգ Մարկոսյան
ակադեմիա (վճ.)

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՄ՝ ՀԱՅԵՐԵՆԸ, ՍԻՐԱՌԱՏ ՈՒ ՈՍԿԵՂԵՆԻԿ Է, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԻՍԿԱՊԵՍ ԱՅՆ ԱՂՈԹՔԻ ԼԵԶՈՒ Է:

Էմմա Ալեքսանյան
ակադեմիա

ԱԶԳԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ԼԵԶՎԻՑ:

Ռուբեն Ջնդոյան
ակադեմիա (վճ.)

ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ ԱՆԳԼԵՐԵՆՆ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ԼԵԶՈՒՆ Է, ՖՐԱՆՍԵՐԵՆԸ՝ ԳՈՒՑԵ ԵՎ ԱՄԵՆԱԵՐԳԵՑԻԿԸ, ԲԱՅՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ԱՅՆ ԼԵԶՈՒՆ Է, ՈՐՈՎ ԱՄԵՆԱՀԱՍԱՐԱԿ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՍԵԼ՝ ԵՍ ՔԵԶ ՍԻՐՈՒՄ ԵՄ:

Կամո Հակոբյան
ակադեմիա (վճ.)

ՄԵՐ ԼԵԶՎԻ ՔԱՂՑՐՈՒԹՅՈՒՆՆ ԶԳԱՑԵԼ ԵՄ ՆՈՒՅՆԻՍԿ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹՈՌՈՒԲՈՌԻ ՄԵՋ, ԵՐԲ ՀԵՐՈՍՆԵՐՆ ԸՆԿՆՈՒՄ ԷԻՆ՝ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ ԻՐԵՆՑ ՇՈՒՐԹԵՐԻՆ ԱՆՄԱՀԱՑՆԵԼՈՎ:

Ժիրայր Փիլոյան
ակադեմիա (վճ.)

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԽԻՂՃՆ Է

Լեզուն ազգային դրոշն է: Ազգն ինքնըստինքյան ազգ չէ, եթե չունի լեզու: Ազգը չի կորչի, եթե նրա լեզուն պատշաճավոր ճոխանա, արմատանա հոգու և սրտի մեջ:

Միքայել Նալբանդյան

Լեզուն է յուրաքանչյուր ժողովրդի ազգային գոյության ու ինքնատիպ էության անհերքելի և ճշմարիտ փաստը, ինքնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, հեռավոր անցյալի, գուցե նաև ապագայի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Լեզվի կատարելագործման վիճակից շատ մեծ չափով կախված է այն, թե ինչպես է մարդը մտածում և գործում, հետևաբար, այն էական նշանակություն ունի սերունդների դաստիարակության և նրանց մտածողության զարգացման համար: Հենց այս տեսակետից ելնելով էլ պետք է հոգատար լինենք լեզվի ճիշտ զարգացման նկատմամբ և ավելի ու ավելի նպաստենք նրա կատարելագործմանը:

Այդ ըմբռնումով էլ անհրաժեշտ է կիրթ հոգածություն ունենալ, սիրով ու երկյուղածությամբ վերաբերվել հազարամյակների պատմություն ունեցող մեր նուրբ ու սուրբ լեզվին:

Գուցե չլինեին Պակիստանում կատարված բուռն իրադարձությունները, աշխարհն առիթ չէր ունենա ամեն տարի փետրվարի 21-ը տոնելու որպես Մայրենիի օր:

1947թվականին, երբ անգլիացիները վերջապես հեռացան Հնդկաստանից, կազմավորվեց Պակիստան պետությունը: Այն կազմված էր երկու տարածաշրջաններից, որոնք իրարից կտրուկ տարբերվում էին մշակույթով և լեզվով: Արևմտյան Պակիստանում իշխում էր ուրդու լեզուն, իսկ արևելյանում՝ բենգալերենը: Չնայած բենգալերենը միլիոնավոր մարդկանց մայրենի լեզուն էր, սակայն 1948 թվականին Պակիստանի կառավարությունն անարդարացիորեն ամբողջ երկրի համար պետական լեզու է հռչակում ուրդուն:

Կառավարության որոշումը երկրի արևելյան մասի բնակչության մեծ մասը դժգոհությամբ է ընդունում, և տեղի են ունենում մասսայական բողոքի ցույցեր: Կառավարությունը ոչ միայն հաշվի չի նստում արևելյան տարածաշրջանի բնակիչների պահանջի հետ, այլև ճնշում է բենգալերենի պաշտպանությանն ուղղված ցույցերը, իսկ 1952 թվականին Դաքքա քաղաքում կայացած ուսանողական ցույցը ճնշելիս մի քանի մարդ զոհվում է՝ հանուն իրենց մայրենի լեզվի իրավունքի պաշտպանության: Այս ողբերգական դեպքերի հետևանքով արդեն բողոքի զանգվածային ցույցեր են ծայր առնում երկրի բազմաթիվ քաղաքներում:

Հակամարտությունների արդյունքում 1956 թվականին բենգալերենն ի վերջո պետական լեզվի կարգավիճակ է ստանում:

Ազգային-ազատագրական պայքարից հետո Արևելյան Պակիստանն առանձնանում է, և 1971 թվականին ստեղծվում է նոր պետություն՝ Բանգլադեշը:

Բուռն իրադարձությունների հիշատակին 1999 թվականի նոյեմբերին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 30-րդ նստաշրջանի որոշմամբ 2000 թվականից փետրվարի 21-ը համարվում է Մայրենի լեզվի միջազգային օր:

Այն Հայաստանի Հանրապետությունում նշվում է 2005թվականից:

Հիրավի, դարերի խորքից մեզ ընծայված մայրենի լեզուն մեր պատմությունն է, մեր մեծագույն զենքը, որը մեզ հնարավորություն տվեց չձուլվելու այլ ազգերին, պահելու մեր ինքնատիպ մշակույթը և մտածողությունը: Այդ ըմբռնումով էլ անհրաժեշտ է կիրթ հոգածություն ունենալ, սիրով ու երկյուղածությամբ վերաբերվել հազարամյակների պատմություն ունեցող մեր նուրբ ու սուրբ լեզվին, որին երբ մեր թշնամիները փորձել են փշրել, կառուցվել է, երբ ջնջել են, սեպագրվել է, իսկ երբ սպանել են, փյունիկի պես նորից հառնել է:

Ռ. Մուսաելյան
ոստիկանության գնդապետ

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Օ~, գրքերի աշխարհը...
Տիեզերք է անեզր...

Եղիշե Չարենց

Հայաստանում և Արցախում 2008 թվականից յուրաքանչյուր տարի՝ փետրվարի 19-ին, ի պատիվ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան, տոնվում է Գիրք նվիրելու օրը:

Քանի որ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը հայոց գրական մշակույթի գագաթն է, և նա մեր ամենաազգային գրողն է, ուրեմն, Թումանյանը նաև հայ ժողովրդի համար լավագույն գրքեր ստեղծողն է եղել:

Մեզնից շատ-շատերը գրքի հետ ծանոթացել ու մտերմացել են հենց թումանյանական հեքիաթներով, մանկական բանաստեղծություններով, անմահ քառյակներով, պոեմներով...

Գիրք նվիրելու օրը բազմախորհուրդ տոն է. այն հիշեցնում է, որ պետք է ճանաչենք գրքի արժեքը, ընթերցենք ու եթե ոչ հաճախ, ապա տարվա մեջ գեթ մեկ օր մեկական գիրք նվիրենք մեր մտերիմներին, հարազատներին՝ դրանով մեկ անգամ ևս հիշեցնելով, որ գիրքը միտք է ու հոգի, որ այն մեզ նվիրում է իրականությունից վերացման անմոռաց րոպեներ ու ժամեր: Տարեցտարի տոնն ավելի մեծ ժողովրդականություն է ձեռք բերում՝ մեծ արձագանք գտնելով հանրության շրջանում և ստանալով համազգային բնույթ:

Գիրք նվիրելիս, սակայն, պետք է հաշվի առնել, թե ում ես նվիրում, և թե նվեր ստացողն ինչ բնավորություն ունի:

Կա մի հեքիաթային գիրք, որն առանձնանում է իր ասելիքով և յուրօրինակությամբ: Դա Անտուան դը Սենտ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» ստեղծագործությունն է: Կյանքի բոլոր իրավիճակներում այդ գրքից միշտ քաղելու և սովորելու, ինչպես նաև հոգին հանգստացնելու համար կարող ենք կարևոր ազդակներ ստանալ:

Սովորաբար ստեղծագործության կերպարներն ընթերցողին փորձառություն, կյանքը գեղարվեստորեն տեսնելու և նորովի վերլուծելու հնարավորություն են տալիս:

Հեքիաթները կարևոր նշանակություն և դերակատարություն ունեն մեր կյանքում: «Փոքրիկ իշխանը» բոլոր տարիքների և հոգեվիճակի, կյանքի իրավիճակների համար միշտ արդիական գիրք է: Այն կարելի է համարել համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկը:

Գիրքը քննադատական մտածողությունը կամ ինքնաքննադատությունը խթանող միջոց է, որից ընթերցողը նորովի մտածելու, վերլուծելու, գտնելու և վերագտնելու հնարավորություն կունենա...

Անգլիայի ժամանակակից կին գրողներից մեկը՝ Լիզա Ջյուելը, իր ստեղծագործություններից մեկում գրել է. «Մեր յուրաքանչյուր հաջորդ քայլը պետք է ուղղված լինի անձնական «ես»-ի ինքնակատարելագործմանը, որպեսզի մարդն ինքն իր հետ համեմատվելու հնարավորություն ունենա»: Կարծում եմ՝ յուրաքանչյուրս մեր իսկ կյանքի գրքի կերտողներն ենք, իսկ այդ դեպքում յուրաքանչյուրն էլ որոշում է իր սյուժեն:

Պետք է կարդալ, շա՜տ կարդալ... Պետք է հաշվի առնել, որ գրքերին ոչինչ չի կարող փոխարինել: Կարևոր է, որ գիրքը դառնա և լինի մեր կյանքի ուղեկիցն ու ընկերը:

Գիրքը բացում է պատուհանը դեպի նոր՝ գայթակղիչ աշխարհ: Այդ աշխարհը կանչում է մեզ իր անսահման տարածություն: Ցանկացած գիրք կարևոր է՝ անկախ նրանից, թե ինչի մասին է այն:

Գիրքը, իրոք, հուսալի ընկեր է: Այն մեծ դեր է խաղում մարդու կյանքում: Առանց նրա ո՛չ կրթությունը, ո՛չ էլ մեր մշակույթը չի կարող գոյատևել: Գիրքն է, որը շարունակում է պահել այն ամենը, ինչ տարբեր ոլորտներում մարդկությունը կուտակել է իր գոյության բոլոր դարերի ընթացքում:

Չնայած մենք ապրում ենք 21-րդ դարում, որտեղ տիրում է համացանցի գերիշխանությունը, սակայն չի կարելի ասել, թե գիրքը կորցրել է իր արժեքը,

ավելին՝ աստիճանաբար բարձրանում է գրքի նշանակությունը մեր հասարակության մեջ: Այդուհանդերձ, կան մարդիկ, որոնք սկսել են շատ դժվարությամբ կարդալ գրքեր, ինչը շատ վատ է անդրադառնում թե՛ մարդու զարգացման, թե՛ պետության, հասարակական արժեհամակարգի ձևավորման համար:

Իրավացի է Չարենցը, որովհետև գրքերի աշխարհն անսահման մեծ է: Գիրքը մարդու ամենալավ բարեկամն է, հավատարիմ զրուցակիցը և խորհրդատուն: Գիրքը մարդուն թևեր է տալիս, տանում տարբեր եզերքներ:

Որքան շատ գրքեր կարդանք, այնքան լայն մտահորիզոն կունենանք, կկարողանանք կյանքին ուրիշ աչքերով նայել:

Հայ ժողովրդի կյանքում ամենամեծ հարստությունը միշտ էլ գիրն ու գրականությունն է եղել, միշտ էլ հոգևոր սնունդը բարձր է եղել ոսկուց ու թանկարժեք քարերից:

Պատահական չէ, որ Լենկ- Թեմուրը հայ գյուղացու բերանը բա-

▶ 3

Պատվաբեր և պատասխանատու

ՆՈՐ ՈՍՏԻԿԱՆԻ ՎԱՍԱՀԵԼԻ ԿԵՐՊԱՐԸ

Ցանկացած երկրի մասին առաջին պատկերացումը կազմվում է ոստիկանության արտաքին ծառայությունից: Համոզված եմ, որ ոստիկանության ամենաակնառու բարեփոխումը՝ նոր պարեկային ծառայության ստեղծումը, շրջադարձորեն կփոխի ոստիկան-հասարակություն հարաբերությունները, որը, ըստ իս, անչափ կարևոր է ոստիկանության վերաբերյալ ՀՀ քաղաքացիների և հյուրերի կարծիքի ձևավորման, վստահության և ապահովության համար:

Հասարակական կարգի, անվտանգության պահպանումն ու ապահովումը պարեկային ծառայողին ավելի է մոտեցնում հասարակությանը և ուղղորդում միանգամայն ճիշտ գործունեությամբ ապահովելու անձի կամ անձերի պաշտպանությունը: Ակնկալում եմ, որ այս ծառայությունը կնպաստի պետականության ամրապնդմանը, հասարակական շերտերի առավել ներդաշնակ գործունեությանը և մեր ազգի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորմանը: Իսկ դրան հասնելու նախապայմաններից է ոստիկանի անաչառությունը, օրինապահությունը, բարձր կատարողականությունը, բարեխղճությունը, պատասխանատվությունը, խնդիրներին արագ արձագանքելու հմտությունը և դրանց անկողմնակալ լուծումներ տալու կարողությունները:

Հենց այս ակնկալիքներով էլ ընտրեցի պարեկային ծառայությունը՝ հույս ունենալով, որ այն կծառայի իմ առջև դրված խնդիրների իրագործմանը, և միանգամայն նորովի կներկայանամ մեր ազգին և հասարակությանը: Դառնալով պարեկային ծառայության մեծ ընտանիքի մի մասնիկը՝ խոստանում եմ տիրապետել մասնագիտական հմտություններին, իսկ ծառայության անցնելուց հետո ցանկացած իրավիճակում հարգել յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները և ազատությունը՝ պահպանելով օրենքն ու օրինականությունը:

Արման Գաբրիելյան
ոստիկանության ավագ ենթասպա,
նոր պարեկային ծառայության
22-րդ դասակ

ԿՃԱՌԱՅԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ

2013թվականից ծառայում եմ ՀՀ ոստիկանությունում: Իրազեկվելով, որ կազմակերպվում է նոր պարեկային ծառայություն, ծանոթանալով ծառայության գործառույթներին՝ որոշեցի մասնակցել ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կազմակերպված ընդունելության քննություններին: Եվ այժմ Կրթահամալիրում անցնում եմ հատուկ դասընթաց: Դասերն անցնում են շատ հետաքրքիր և դասավանդվում բարձր մակարդակով: Համոզված եմ, որ նոր ծառայությունը կայանալու է և վայելելու է մեր հասարակության վստահությունը:

Հատկապես նյութատեխնիկական նոր միջոցներով հագեցվածությունը մեզ թույլ կտա ծառայության ընթացքում արագ ու արդյունավետ արձագանքել ահազանգերին, իրավախախտումներին և քաղաքացիների խնդիրներին: Ոստիկանությունում ծառայության իմ յոթնամյա փորձը և ձեռք բերված նոր գիտելիքները պատրաստ եմ ներդնելու, որպեսզի նոր պարեկային ծառայությունը գրանցի պատշաճ հաջողություններ:

Ծառայակից ընկերներիս կոչ եմ անում հնարավոր բոլոր միջոցներով աջակցել այս առաքելությանը՝ առաջնորդվելով հետևյալ կարգախոսով՝ ԾԱՌԱՅԵԼՈՎ ՕՐԵՆՔԻՆ՝ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ:

Կարեն Հովհաննիսյան
ոստիկանության կապիտան,
նոր պարեկային ծառայության
23-րդ դասակ

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ

2 ◀ ցելու համար (երբ ուզում էր վանքի ոսկիների տեղն իմանալ) փորձել է այրել գրքերը: Նա և մյուս զավթիչները շատ լավ հասկանում էին, որ հայի խոցելի տեղը սեփական գրքերն են, գրքեր, որոնցում ամփոփված են մեր ժողովրդի պատմությունն ու ավանդույթները: Եվ հայ գյուղացին, հայ շինականը, անգամ կարդալ չիմանալով, նախընտրել է զրկվել ոսկուց, հարստությունից, քան թե «սեփական պատմությունը» կրակին տալ:

Մեր պատմությունը, մեր ժողովրդի հարուստ անցյալը միշտ էլ ոգեշնչման աղբյուր են եղել հանճարների համար: Նրանցից շատերը՝ Ռաֆֆին, Դեմիրճյանը, Մուրացանը, Զորյանը, Խանզադյանը,Զարյանը, հրաշալի կոթողներ են ստեղծել, որոնք երբեք չեն կորցնելու իրենց դաստիարակչական դերը, միշտ էլ կրթելու և լուսավորելու են հայ պատանուն, հայ երիտասարդին: Ինչպե՞ս կարելի է չսիրել իր ժողովրդի կյանքն արտացոլող վեպերը՝ պատմավեպերը: Այդ պատմավեպերի խունացած էջերում են պահպանվում մեր երկրի, մեր մայր Հայաստանի և՛ դաժան, և՛, ավա՜ղ, շատ սակավ լուսավոր օրերը:

Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը շատ ուսանելի է և արժեքավոր: Եթե մեր կյանքում Մարզպետունու նման հերոսներ շատ լինեին, ապա Հայաստանը շատ ավելի հզոր կլիներ: Մարդ, որի կյանքի նպատակը հայրենիքին ծառայելն է՝ անգամ մահից հետո, մարդ, որ կարողացավ երկրի թագավորին և իշխաններին հասկացնել, որ հայրենիքի շահը բարձր է անձնական շահից ու ապրումներից, մարդ, որը պատրաստ էր իր երկրի համար զոհաբերելու այն, ինչն ամենաթանկն էր իր համար՝ հարազատ որդուն:

Կարծում եմ՝ արցախյան պատերազմներում իրենց կյանքը զոհաբերած Մոնթե Մելքոնյանը, Մովսես Գորգիսյանը և մյուսները ներշնչվել են Գևորգ Մարզպետունու օրինակից:

Մարզպետունին բացառիկ օրինակ է հայ վարչապետի, նախագահի համար, հայ պատգամավորի ու շինականի համար, հայ զորավարի ու զինվորի համար:

Բոլորս էլ մեր անձնական շահը պետք է մի կողմ թողնենք, պետք է նախապատվությունը տանք մեր երկրի ծաղկմանը, մեր երկրի վաղվա օրվան:

Նվիրենք միմյանց գրքեր և արթուն պահենք մեր մեջ ընթերցողին:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ

Գիտականորեն հիմնավորված, իմաստավորված ֆիզիկական կուլտուրայի և սպորտի՝ որպես մարդկային գործունեության կարևորագույն ոլորտի ստեղծումը բարդ և երկարատև գործընթաց է: Այն միակ բնագավառն է, որ ամբողջովին նվիրված է մարդու ֆիզիկական կարողությունների հայտնաբերմանը և զարգացմանը, օրգանիզմի կոփմանը և ֆիզիկական ամրապնդմանը, աշխատունակության և առույգության բարելավմանը, անձին նախապատրաստելու երկարամյա, հասարակությանը պիտանի, օգտակար աշխատանքային գործունեությանը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը ոչ միայն զարգացնում են մարդու մկանային ողջ համակարգը, այլև դրականորեն են անդրադառնում աղեստամոքսային, սիրտանոթային համակարգի անխափան աշխատանքին, շնչառական և նյարդային համակարգերի կարգավորմանն ու հոգեկան ոլորտի ձևավորմանը:

Ֆիզիկական կուլտուրան և սպորտը մինչև առանձին բնագավառ կազմավորվելը, անցնելով հազարամյակներ՝ սկսած նախամարդու ժամանակներից մինչև օրս, ներկայում էլ շարունակում են իրենց զարգացման գործընթացը՝ հանրությանը ներկայացնելով մարդկային կարողությունների ֆանտաստիկ արդյունքները՝ մեկ անգամ ևս ապացուցելով, որ մարդու օրգանիզմում թաքնված են գերբնական ուժեր, և հարցն այն է, թե մարդն ինչպես կարող է մոբիլիզացնել իր ներուժը դրանք վեր հանելու և օգտագործելու համար: Օրգանիզմի նման մոբիլիզացիան հնարավոր չէ առանց մարդու ֆիզիկապես զարգացած, կոփված մարմնի, այդ իսկ պատճառով անձի՝ արդեն իսկ ձևավորված նյարդահոգեբանական ողջ համակարգը կարող է մոբիլիզացվել միայն առողջ և կոփված օրգանիզմի առկայությամբ:

Ոստիկանության (այդ թվում՝ պարեկային ոստիկանության) ծառայության աշխատակիցների համար ֆիզիկական պատրաստականությունն ինքնուրույն բաժին է, արհեստավարժության բարձրացման, ծառայողամարտական պատրաստականության կարևորագույն մասնիկ:

Ոստիկանության աշխատակիցների ֆիզիկական պատրաստականության նպատակը ֆիզիկական և հոգեբանական որակների ձևավորումն է՝ իրենց նշանակության համապատասխան՝ անթերի և հաջող կատարել օպերատիվ, ծառայողական, մարտական խնդիրները, ճիշտ կիրառել ֆիզիկական ուժը՝ մարտական ընմբշամարտի հնարքներով և հատուկ միջոցներով, խափանել զանազան հակաօրինական դրսևորումներ:

Ոստիկանության աշխատակիցների ֆիզիկական պատրաստականության հիմնական միջոցը ֆիզիկական վարժություններն են, որոնք կատարվում են՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, պահպանելով հիգիենայի պահանջները և անվտանգության կանոնները:

Ֆիզիկական վարժությունների մեջ, որպես ֆիզիկական պատրաստականության միջոց, նշում ենք.

ա) արագային վարժություններ՝ բնորոշ են արագ ընթացքը և տեղափոխումը (շարժումը) տարածության մեջ, հարվածներից շեղվելը և այլն,

բ) ուժային վարժություններ՝ բնորոշ են տարբեր քաշային առարկաների տեղափոխումը տարածության մեջ կամ արտաքին ազդեցության դիմադրումը (ծանրաձողի բարձրացումը, ձգումներ պտտաձողին, մարզաձողից, ծանրություններ և մարդկանց տեղափոխումը և այլն),

գ) արագաուժային վարժություններ՝ բնորոշ են ուժի ցուցաբերումը կարճ ժամանակահատվածում, այսինքն՝ արագության և հզորության ջանքեր (թռիչքներ, առարկաների նետում, հարվածներ ձեռքերով, ոտքերով և այլն),

դ) դիմադրողական վարժություններ, որոնք պահանջում են փուլային ընթացքների առավելագույն դիմադրողականություն (միջին և երկար տարածության վազքեր, լող և այլն),

ե) կոորդինացված վարժություններ՝ պահանջում են կոորդինացված (համակարգված) ընդունակություններ, մարզական գործիքներ, ծանրաձողի բարձրացում, տարբեր արգելքների հաղթահարում, ատլետիկա և այլն,

զ) միաժամանակյա վարժություններ՝ պահանջում են միաժամանակյա ֆիզիկական հատկությունների համալիր ցուցադրումը փոփոխական ռեժիմի պայմաններում (ըմբշամարտ, բռնցքամարտ, շարժողական խաղեր, խոչընդոտների հաղթահարում և այլն):

«Ֆիզիկական պատրաստություն» և «Ֆիզիկական պատրաստականություն» հասկացությունների տարբերությունն ընկալելու համար ստուգաբանենք «պատրաստություն» և «պատրաստականություն» եզրույթները: Հայերենում «պատրաստություն» եզրույթը նշանակում է որևէ բանի համար կատարվող աշխատանքների՝ միջոցառումների ամբողջություն: «Պատրաստականություն» եզրույթն օգտագործվում է տարբեր գիտություններում և բնագավառներում (մաթեմատիկական, տեխնիկական, իրավաբանական, երաժշտական, ռազմական, ֆիզիկական, մարզական և այլն): Այն տվյալ բնագավառում անհրաժեշտ բավարար գիտելիքներ ունենալն է, պատրաստ վիճակում գտնվելը:

«Պատրաստություն» հասկացության բոլոր տարատեսակները միավորվում են «մասնագիտական պատրաստություն» հասկացության տակ, որն ունի իր գնահատման աստիճանները և նորմատիվային պահանջները (բժշկատարիքային խմբերի թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար նայել ՀՀ կառավարության 09.03.2017թ. թիվ 224-Ն որոշումը): Ցանկացած մասնագիտության մեջ ֆիզիկական պատրաստականությունը նպաստում է արդյունավետ աշխատանքի ապահովմանը:

Աշոտ Գրիգորյան
ոստիկանության գնդապետ

ԱՐԺԱՆԱՑԵ՛Ք ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻՆ

«Ոստիկանության 100-ամյակ» հոբելյանական մեդալով ոստիկանության ծառայողը պարգևատրվում է ծառայողական պարտականությունները բարեխղճորեն, բարձր պատասխանատվությամբ կատարելու և բազմամյա ծառայության համար:

«Հայաստանի Հանրապետության ոստի-կանության պատվավոր ծառայող» Հայաստանի Հանրապետության ոստիկա-նության պատվավոր ծառայող կրծքանշանը տրվում է ոստիկանությունում օրացուցային հաշվարկով ոչ պակաս, քան 25 տարի ծառայած և 20-ից ոչ պակաս խրախուսանք ունեցող ոստիկանության ծառայողին՝ ոստիկանության առջև դրված խնդիրների իրականացման, ոստիկանության կայացման, զարգացման, օրինականության ամրապնդման գործում զգալի ավանդ ներդնելու, ծառայողական պարտակա-նությունները կամ հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու, ինչպես և երկարամյա ու անբասիր ծառայության համար:

ՄԵՋԵՐԸ՝ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

* Գիրքը մարդու ընկերն է, իսկ ընկերներին պետք է կարողանալ ընտրել:

Իլյա Գերչիկով

*Հիշեք, այն, ինչ դուք ձեզանից ներկայացնում եք, որոշվում է նրանով, թե ինչ եք դուք կարդում:

Ջիմ Ռոն

*Գրքերը լուսավորում են հոգին, վերացնում և ամրապնդում են մարդուն, նրա մեջ արթնացնում լավագույն ձգտումները, սրում նրա միտքը և մեղմացնում սիրտը:

Թեքերեյ

* Գիրքը պետք է կարդալ մատիտը կամ գրիչը ձեռքին: Ոչ մի բան այնպես չի ձևավորում ճաշակն ու դատողությունների ճշտությունը, ինչպես դուր եկած հատվածն արտագրելու կամ խորիմաստ միտքը նշելու սովորությունը:

Անդրե Մորուա

* Գրքերը նույն թշնամիներն ունեն, ինչ մարդիկ՝ կրակը, խոնավությունը, կենդանիները, եղանակը և իրենց սեփական բովանդակությունը:

Պոլ Վալերի

* Գրքերը մտքերի նավեր են, որոնք, թափառելով ժամանակի ալիքների մեջ, խնամքով տանում են իրենց թանկարժեք բեռը սերնդից սերունդ:

Ֆրենսիս Բեկոն

* Գիտուն հիմարը նա է, ով կարդացել է աշխարհում ամեն բանի մասին և կարդացածը ուղղակի պահել հիշողության մեջ:

Հենրի Շոու

* Գիրք կարդալը ծով մտնելու նման է, պիտի գլուխդ պտտվի ծովի անսահմանությունից, պիտի հանկարծ քո մեջ շոշափես հավերժության ներկայությունը, պիտի հանձնվես տարերքին:

Վարդգես Պետրոսյան

* Գիրքը քո այն ուսուցիչն է, որ քեզ երբեք չի պատժի, բայց սխալ գործելու դեպքում քեզ ամեն ինչ այնպես կհասկացնի, որ էլ երբեք նույն սխալը չես կրկնի:

Նարե Ղալամքարյան

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՁՈՆ ԱՆՄԱՀՆԵՐԻՆ

Ձնահանջեցիր ու չիջար ծնկի,
Դու կազմ ու պատրաստ նետվեցիր մարտի,
Մեզ պաշտպանելով՝ դու հավերժացար,
Մեզնից գնացիր և անմահացար ...

Դու անպարտելի իմ քա՛ջ հայորդի,
Շիրմիդ ծաղիկը երբեք չի թոշնի,
Հավերժ փառք կտանք սխրանքիդ համար,
Մերօրյա՛ հերոս, մեր զինվո՛ր համառ:

Քո սուրբ ծնողի անփայլ աչքերը
Նորից ժպիտով մենք կզարդարենք,
Քո թափած արյան ամեն կաթիլը
Թշնամու սրտից, անխոս, կքամենք ...

Արևիկ Մկրտչյան
ոստիկանության լեյտենանտ

ՀՈՐՍ

Քայլ առ քայլ կյանքիս էջերն եմ թերթում,
Մանուկ օրերիս կարոտն է վառվել,
Արդեն վաղուց է՝ մի միտք եմ անում՝
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Երբ հողմերն են ոտատակ գալիս,
Ու ժայռերը վեհ խոնարհվում անել,
Մի ուժ է ներսից կոկորդս խեղդում՝
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Եվ բարձունքներիս գագաթին թիկնած՝
Գոհունակ դեմքս կյանքին եմ հառել,
Այս ամբոխամոլ, խառնակ աշխարհում
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Ինքս իմ աչքում իմաստուն դարձած՝
Որքա՜ն անգամ եմ,սակայն, սայթաքել,
Բայց ծնկաչոք եմ խոսքերիդ դիմաց.
Մի՞թե կա կյանքում հոր սիրուց ավել:

Երբ հոգնել էի բոլոր սերերից,
Եվ հուշն իմ աղի արցունք էր դարձել,
Թևաթափ սրտիս մի ուժ էր պահում.
Չկա քո սիրուց, հա՛յր իմ, առավել:

Շուշան Հոդաբաշյան
ոստիկանության լեյտենանտ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՒՆԵՂ ԱՎԱՆԴՈՒՅԹ՝ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Հավատքը մեր արյան կանչն է: Մեր ազգային ծեսը նշելով՝ մենք մեր հավատքն ենք նորոգում, իսկ որքան հավատքը մեր մեջ զորավոր լինի, որքան քրիստոնեական ոգին մեր մեջ կենդանի լինի, այնքան մենք ավելի միասնական կդառնանք, և մեր մեջ կիշխի սիրո ոգին:

Փետրվարի 14-ին նշվեց եկեղեցական գունեղ ավանդույթներից Տեառնընդառաջը՝ քառասուն օրական Փրկչին Երուսաղեմի տաճարին ընծայաբերելու տոնը: Դեռևս հեթանոսական շրջանից եկած այս տոնը նաև համարվում է նորապսակների օրհնության օր:

Տեառնընդառաջ նշանակում է «ելնել Տիրոջն ընդառաջ», տարածված է նաև Տերընդեզ, Տըրընդեզ, որոնք ծագել են «Տերն ընդ ձեզ» անվանումից:

Ղուկաս ավետարանիչը հիշատակում է, որ ըստ հրեական օրենքի՝ ամեն մի արու զավակի ծննդից հետո, երբ լրանում էին սրբագործման 40 օրերը, նորածնի մայրն իր երեխայի հետ այցելում էր Տաճար, զոհաբերելու համար ընծա պետք է տար մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագ և իր զավակի համար օրհնություն ստանար քահանայից: Այսպես և ս. Աստվածամայրը 40-օրական Հիսուսի հետ ներկայանում է Տաճար, այնտեղ նրան դիմավորում է Սիմեոն ծերունին, որին Սուրբ Հոգուց հրամայված էր մահ չտեսնել, մինչև Տիրոջ Օծյալին տեսնելը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Տեառնընդառաջը կամ 40-օրական Հիսուսի ընծայումը տաճարին տոնում է Աստվածահայտնությունից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին: Ծիսական արարողություններն սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան: Ժամերգության ընթացքում կատարվում է Անդաստանի արարողություն, որը խորհրդանշում է ձմռան ավարտը և գարնան սկիզբը: Երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցու կանթեղներից վերցված կրակով վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Տեառնընդառաջի պատարագից հետո Հայոց եկեղեցիներում տեղի է ունենում նորապսակների օրհնության կարգ:

Հոգևորականներն ու հավատացյալները ժամերգությանը մասնակցում են ձեռքերում օրհնված մոմեր պահելով: Արարողակարգի ավարտից հետո մարդիկ այդ մոմերը տուն են տանում և դրանցով լուսավորում իրենց օջախները:

Տոնի ժողովրդական ավանդույթներից այսօր պահպանվել է խարույկավառությունը և դրա շուրջ տոնակատարությունը: Խարույկը հնում վառում էին հիմնականում ցորենի հասկերից, կանայք սկուտեղի վրա բերում էին Տրնդեզի տոնական կերակրատեսակները՝ փոխինդ, չամիչ, աղանձ, ընկույզ, հորած սիսեռ, և պտտեցնում կրակի շուրջ, մի մասը բաժանում էին, մյուս մասը ներս տանում՝ երեկոյան խնջույքի համար:

Պտտվում էին խարույկի շուրջ, և երբ բոցը ցածրանում էր, սկսում էին կրակի վրայով թռչել՝ իբր մաքրագործվելու համար: Տեառնընդառաջի խարույկին վերագրել էին տարբեր հրաշագործ հատկություններ. կա մի հավատալիք՝ ըստ որի չբեր կինը, այրելով իր զգեստի քղանցքն այդ կրակով, անպայման արու զավակ կունենա:

Ցավո?ք, այս տարի մեր հինավուրց հայրենիքին պատուհասած պատերազմը կոտրեց մեր թևերը. այսօր սուգն ու կորուստն է թագավորում հայի օջախում, սակայն մենք ընկճվող ազգ չենք, հեշտ չի կոտրել փյունիկի թևերը. մենք դեռ հառնելու ենք, դեռ մեր արծվի թևերը թափահարելու ու ճախրելու ենք մեր մայր Հայաստանի ջինջ ու մաքուր երկնքի տակ:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 01. 2021թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: